

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՊՍԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆԻ
(1912—1981)

Հունիսի 17-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան, Լոնդոնի իր բնակարանում, 69 տարեկան հասակում, հանկարծամահ է լինում Մայր Աթոռի միաբան, Անգլիայի հայրապետական նախկին պատվիրակ Տ. Պսակ արքեպ. Թումայանը:

Վեհափառ Հայրապետը անձամբ և Մայր Աթոռը ծանր կորուստ են կրում Տ. Պսակ արքեպիսկոպոսի հանկարծական մահով:

Հանգուցյալը, ավազանի անունով Բաբգեն, ծնվել է 1912 թվականին Պարտիզակում, Կ. Պոլսի մոտ, արհեստավոր ածխագործի ընտանիքում:

Նա իր նախնական կրթությունը ստացել է 1919-ին հայաշատ իր հայրենի գյուղի դպրոցում, ապա իր ուսումը շարունակել է Կ. Պոլսում, Ազգային խնամակալության որբանոցում, 1918—1919 թվականներին:

1922—1926 թվականներին որպես որբ մնում է Հունաստանի Սիրայի քաղաքի ամերիկյան Նիյր Իստ Ռիլլֆի որբանոցում:

1926 թվականին ուսումնատենչ Բաբգենը ընդունվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վարժարան՝ իր սրտում փայփայելով հետագայում Ս. Աթոռին ծառայելու կոչումը:

Հաջողությամբ ավարտելով Ժառանգավորաց վարժարանի դասընթացը, 1930-ին սարկավագ է ձեռնադրվում՝ դառնալով Սրբոց Հակոբյանց ուխտի անդամ:

1934-ին հաջողությամբ ավարտում է նաև վանքի ընծայարանի սարկավագական բաժինը և Տ. Թորգոմ սրբազան պատրիարքից

կուսակրոն քահանա է ձեռնադրվում՝ վերանվանվելով Տ. Պսակ աբեղա:

Երիտասարդ, ժրաջան, խոստումնալից վանականի առաջ բացվում է վանքում գործունեության լայն ասպարեզ: Օժտված լինելով ձայնական շատ փայլուն ձիրքերով, նա նվիրվում է մանավանդ շարականագիտության և եկեղեցական երաժշտության ուսումնասիրության գործին: Նշանակվում է Ժառանգավորաց վարժարանի եկեղեցական երաժշտության դասախոս և Ս. Հակոբյանց Մայր տաճարի դպրապետ, ծառայություններ, որ նա կատարում է մեծ նվիրումով, սիրով ու հմտությամբ, 1934—1938 թվականներին:

Այնուհետև Տ. Պսակ վարդապետը Ս. Աթոռից դուրս կոչվում է թեմական-վարչական պաշտոնների: 1943—1949 թվականներին նա ձեռնհասորեն վարում է Ալեքսանդրիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդությունը, որտեղ հանդես է բերում իր կազմակերպչական ընդունակությունները:

1949 թվականին Տ. Պսակ վարդապետը Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի կողմից նշանակվում է Լոնդոնի հայ համայնքի հոգևոր հովիվ: Այդ համայնքը նրա հովվության օրով ապրում է հոգևոր, կազմակերպչական մի նոր շրջան: Նա զարկ է տալիս եկեղեցասիրության և եկեղեցու բարեզարդության, հովվական մշտական այցելությամբ աշխատում է այդ մեծ մայրաքաղաքում ցաք ու ցրիվ եղած հայ ժողովրդի բեկորներին հավաքել եկեղեցու շուրջ:

Տ. Պսակ վարդապետը 1955 թվականի սեպտեմբերին, որպես պատգամավոր Լոնդոնի հայ համայնքի, մասնակցել է Ս. Էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական ժողովին: Հոկտեմբերի 23-ին Հայոց նորընտիր Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, Իր բարձր գնահատությանն արժանացնելով Տ. Պսակ վարդապետի ծառայությունը, եպիսկոպոս է ձեռնադրում նրան և նշանակում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ, միաժամանակ Քենթըրբերիի և Համայն Անգլիայի Արքեպիսկոպոսության մոտ Հայ Եկեղեցու ներկայացուցիչ:

Այնուհետև Տ. Պսակ եպիսկոպոսը իր երկարամյա հոգևոր, վարչական ծառայությունների համար արժանանում է Վեհափառ Հայրապետի արքության պատվի տրվչության:

Տ. Պսակ արքեպիսկոպոսի մահվան առիթով Վեհափառ Հայրապետը 19 հունիս 1981 թվակիր հետևյալ ցավակցական հեռագիրն է ուղարկում Լոնդոն, Տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանին.

«Խոր վշտով կարդացինք Ձեր հեռագիրը, որով գուժում եք վաղաժամ մահը Մեր սիրեցյալ Պսակ արքեպիսկոպոսի: Փրկչի Իշման Սուրբ Սեղանի առաջ աղոթում ենք, որ Տերը լուսավորի նրա հոգին և արժանացնի երկնից արքայությանը:

Սուրբ Էջմիածնից օրհնություն նրա հիշատակին և երկար տարիների նրա վաստակին: Մայր տաճարում կիրակի՝ պատարագ և հոգեհանգիստ հանգուցյալի հիշատակին:

Թող Աստված մխիթարի Սուրբ Հոգով Ձեզ և լոնդոնահայ հավատացյալ մեր ժողովուրդը»:

Հունիսի 21-ին, կիրակի օրը, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հավարտ ս. պատարագի, կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ Տ. Պսակ արքեպիսկոպոսի:

Նորին Սուրբ Օծությունը Իր դամբանական խոսքի մեջ վեր է հանում հանգուցյալ սրբազանի երկարամյա հոգևոր ծառայությունը Հայ Եկեղեցուն:

Հանուն Վեհափառ Հայրապետի Հանգուցյալ Տ. Պսակ արքեպիսկոպոսի վերջին օծման և թաղման արարողություններին ներկա են լինում Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սիրովբե արքեպ. Մանուկյանը և Հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ Տ. Գյուտ եպիսկոպոս Նագգաշյանը:

Հանգի՜ստ Տ. Պսակ արքեպիսկոպոսի ոսկորներին: